ԱՅՆՏԵՂ՝ ԻՆՉՊԵՍ ԱՅՍՏԵՂ

# ՈՒ՞Ր ԿՈՐԱՎ 1 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԸ

**Հայկական բարեգործական ընդհանուր միությունը մոտ մեկ ամիս առաջ հայտարարեց Կիպրոսի Մելքոնյան վարժարանը փակելու իր որոշման մասին:**



Վարժարանի շրջանավարտները, սակայն, երեկ տարածել են մի հաղորդագրություն, որում լրջագույն մեղադրանքներ են ներկայացնում ՀԲԸՄ-ին եւ հայտարարում, որ բարեգործական միությունը յուրացրել է դպրոցին պատկանող միլիոնավոր դոլարներ: Բանն այն է, որ Մելքոնյան վարժարանը, որը բացվել է 1925 թվականին եւ սփյուռքի միակ ու ամենահայտնի գիշերօթիկ դպրոցն է, ի սկզբանե ունեցել է 425.092,5 եգիպտական ֆունտ: Մելքոնյան եղբայրներն այդ գումարը, որի տնօրինման իրավունքը վստահվել է ՀԲԸՄ-ին, տվել են այն պայմանով, որ օգտագործվեն միայն դրա տոկոսներն ու եկամուտները: Սա ֆիքսված է եղբայրների թողած կտակում, որտեղ նշվում է նաեւ, որ դրա նպատակն է՝ «ապահովել երիտասարդ աղքատ հայերի կրթությունը»: Մելքոնյանի շրջանավարտների հաշվարկներով՝ այսօր այդ ժառանգությունը հասնում է 1 միլիարդ 500 միլիոն դոլարի: «Բայց եւ այնպես, Մելքոնյան հիմնադրամից այսօր մնացել է միայն 5 միլիոն 500 հազար դոլար: 78 տարիների ընթացքում ՀԲԸՄ-ն ոչ մի հաշվետվություն չի ներկայացրել, թե ինչ է պատահել այդ ամբողջ հարստության հետ, եւ կոնկրետ ինչպես են ծախսվել այդ հիմնադրամից առաջացած տոկոսները: Բացի այդ, ՀԲԸՄ-ն շարունակաբար հրաժարվել է ներկայացնել նույնիսկ Մելքոնյան կրթահամալիրի հաշիվները»,- ասված է Մելքոնյան կրթահամալիրի շրջանավարտների տարածած հայտարարության մեջ, որը որպես բաց նամակ ուղղված է համայն հայությանը: Ավելին, երեկ մեզ հայտնի դարձավ, որ Լոս Անջելեսում բնակվող Մելքոնյան կրթահամալիրի շրջանավարտները պատրաստվում են դատի տալ Հայկական բարեգործական ընդհանուր միությանը՝ կրթահամալիրի գործով: Երեկ, սակայն, մի քանի օրով Հայաստանում գտնվող ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանն իր հրավիրած ասուլիսի ժամանակ այս մեղադրանքների կապակցությամբ ոչ մի կոնկրետ բան չասաց՝ խնդրելով փաստեր բերել: Նա ներկայացրեց մի հաշվետվություն, ըստ որի՝ Մելքոնյանի ուսանողների մեծամասնությունը չի վճարում դպրոցական վարձերը, որոնք, համեմատած այլ կրթական հաստատությունների վարձերի հետ, շատ ավելի ցածր են: «2002-ին «Մելգոնյան» աշակերտության միայն 18%-ն է ամբողջությամբ վճարել ուսումնական վարձը, 40%-ը վճարել է մասնակի, իսկ մյուս 40%-ն ընդհանրապես չի վճարել: ՀԲԸՄ-ի հատկացրած 609 հազար 200 կիպրական ոսկին փակում է ընթացիկ ծախսերի 55 տոկոսը միայն»,- նշված է սույն հաշվետվության մեջ (2003 թվականի տվյալներով՝ դպրոցի աշակերտության թիվը հասնում է 206-ի): Հայտարարելով, որ դպրոցի փակման որոշում կայացնելն իրենց համար մեծ ցավ էր, պարոն Սեդրակյանը երեկ հայտարարեց, որ Մելքոնյան եղբայրների թողած կտակի հասույթների հաշվին իրենք մշակելու են նոր ծրագրեր, որոնք իրականացվելու են եւ Կիպրոսում, եւ նրանից դուրս (նաեւ Հայաստանում): Մելքոնյանի շրջանավարտները, սակայն, կարծում են, որ դպրոցը փակելու գաղափարը հավասարազոր է սպիտակ եղեռնին: Ըստ շրջանավարտների, ՀԲԸՄ-ին հանձնարարված էր միայն «Մելքոնյան հիմնադրամի» ֆինանսական կառավարման պարտականությունը եւ շարունակելու եղբայրների առաքելությունը: Եղբայրների կտակը նաեւ հստակորեն սահմանում է, որ ՀԲԸՄ-ն իրավունք չունի վաճառելու կրթահամալիրի հողերը կամ փակելու դպրոցը: Բայց եւ այնպես, ըստ շրջանավարտների, Մելքոնյանի հողերի մեծ մասը վաճառվել է 80-ական թվականներին, եւ գումարներն օգտագործվել են «Մելքոնյան կոմերցիոն կենտրոնը» կառուցելու համար: «Սույն ձեռնարկությունը խոստանում էր Մելքոնյանը դարձնել ինքնաֆինանսավորվող հաստատություն, բայց, ավաղ, դրա բոլոր եկամուտները մինչ օրս ուղղակի գնում են ՀԲԸՄ-ին»,- ասված է դպրոցի շրջանավարտների բաց նամակում: Ավելին, ըստ շրջանավարտների, եղբայրների կտակը կազմված է այնպես, որ եթե անգամ ՀԲԸՄ-ն սնանկանա, դպրոցը չի կարող փակվել, եւ հստակորեն նշված են բոլոր հրահանգները բանկերին այն դեպքում, եթե ՀԲԸՄ-ն անկարող լինի շարունակելու կատարել Մելքոնյանի առաքելությունը: Այս բոլոր փաստաթղթերը շրջանավարտները տեղադրել են «savemelkonian.org» ինտերնետային հասցեում: «Աշխարհի Մելքոնյան շրջանավարտների կոնֆեդերացիան կոչ է անում համայն հայ ազգին եւ յուրաքանչյուր հայ մարդու՝ ուժերի ներածին չափով օգնել մեզ մեր պայքարում՝ ուղղված մշակութային եղեռնի դեմ, որ ՀԲԸՄ-ն պատրաստվում է ոճրագործել: Սա արդեն համահայկական հարց է: Մենք երբեք չենք հոգնի»,- նշված է շրջանավարտների տարածած հայտարարության մեջ, որը տեղադրված է նաեւ նրանց ինտերնետային էջում:

*ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ*